

# ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



## ՏԵՐՄԻՆԻ ՍԱՐՄԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ի. Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Տերմինի<sup>1</sup> սահմանման խնդիրը միշտ էլ եղել է տերմինաբանական տարբեր դպրոցների ներկայացուցիչների գիտական որոնումների ու հետազոտությունների առարկա: Ուստի զարմանալի չէ, որ «տերմին» հասկացության վերաբերյալ կան տարբեր՝ նման, իրար լրացնող, միմյանց հակասող ըմբռնումներ և ձևակերպումներ: Լեզվաբանական գրականության մեջ առայսօր չկա այդ հասկացության համընդունելի սահմանում: Գիտնականների հաշվումներով ներկայումս գոյություն ունի տերմինի երեք հազարից ավելի սահմանում, բայց, այդուհանդերձ, չկա մեկը, որ լինի համընդունելի: Ռուս լեզվաբան Վ. Գ. Տաբանակովան փորձել է պատասխանել այն հարցին, թե ինչու չկա տերմինի համընդունելի սահմանում. «Մի կողմից՝ դա բացատրվում է նրանով, որ տերմինագիտության տեսական հիմքերը դեռևս բավարար չափով մշակված չեն, տարբերակված չեն նրա հիմնական հասկացությունները, մյուս կողմից՝ այն զանազան սահմանումները, որոնք այսօր գոյություն ունեն գրականության մեջ, ոչ միշտ և ոչ լիովին են արտացոլում սահմանվող երևույթի էությունը»<sup>2</sup>:

Տերմինի սահմանման դժվարությունն այն է, որ մի կողմից՝ այն որևէ լեզվի բառ (բառակապակցություն) է, հետևաբար օժտված է բոլոր բառերին բնորոշ բառային հատկանիշներով, իսկ մյուս կողմից՝ հատուկ գործառույթով բառ (բառակապակցություն) է և որոշակիորեն տարբերվում է մյուս՝ ոչ տերմինային բառերից (բառակապակցություններից): Տերմիններն այլ բառերից և բառակապակցություններից տարբերակելու համար լեզվաբաններն առանձնացնում են որոշակի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հատուկ հասկացության արտահայտություն, ճշգրտություն, հասարակայնորեն տարանջատվածություն (սոցիալականություն), գործածության ոլորտի հատակ սահմանափակություն, համատեքստային անկախություն, մենիմաստություն, հակիրճություն, պատճառաբանվածություն (բառի ձևից և բաղադրիչներից բխող իմաստի և իրական իմաստի համապատասխանություն), պարզություն, ոճական չեզոքություն, հոմանշության բացակայություն և այլն:

<sup>1</sup> Հայ լեզվաբանության մեջ «տերմինին» արդեն փոխարինում են «գիտաբառ», «եզր», «եզրույթ» բառերը, իսկ «տերմինաբանությանը»՝ «եզրաբանություն» բառը: Բայց քանի որ լեզվաբանների ճնշող մեծամասնությունը գործածում է «տերմին» և «տերմինաբանություն» բառերը, մենք նույնպես գործածում ենք դրանք նույնանշությունից, հետևաբար՝ մտքի շփոթից խուսափելու նպատակով:

<sup>2</sup> **В. Д. Табанакова**, Понятие научно-технического термина и требования к его определению. В. кн. “Термин и слово”, Межвузовский сборник, Горький, 1982, с. 24.

Սակայն գիտնականների մեծամասնությունն ընդունում է, որ վերոնշյալ հատկանիշներից շատերը (մենիմաստություն, հոմանշության բացակայություն, պատճառաբանվածություն, պարզություն, հակիրճություն) ոչ այնքան տերմինի հատկություններ են, որքան նրան ներկայացվող պահանջներ, որոնք ոչ միշտ են իրագործվում: Այդ հատկանիշներն ամբողջությամբ միայն իդեալական տերմինը կարող է ունենալ: Ինչպես նշում է Ա. Ի. Մոխսեևը, «տերմինին, ինչպես նաև տերմինաբանությանն ամբողջությամբ, վերագրվող հատկանիշները՝ իմաստի ստույգություն, մենիմաստություն և այլն, ավելին չեն, քան նրանց հակվածություն կամ ցանկալի որակ, կամ, վերջապես, լավ, բանականորեն կառուցված տերմինահամակարգին ներկայացվող պահանջ»<sup>3</sup>:

Սակայն այդ բազմաթիվ հատկանիշների մի մասը, թեկուզ և տարբերակիչ չէ, բայց այս կամ այն չափով բնորոշ է տերմինին, իսկ մի մասը կազմում է տերմինի էությունը, որն էլ անհնար է դարձնում ձևակերպել այնպիսի սահմանում, որը միաժամանակ և՛ կրնդգրկի հատկանիշների այդ խումբը, և՛ կլինի համընդհանուր և համընդունելի: Ուստի գիտնականները փորձում են տալ տերմինի այնպիսի սահմանում, որը, որպես կանոն, լիարժեք չէ, բայց ընդգրկում է այդ հասկացությանը բնորոշ առավել էական հատկանիշ կամ հատկանիշներ<sup>4</sup>: Այդ առավել էական հատկանիշների ընտրությունից էլ հենց կախված է տեսակետների, հետևաբար նաև՝ սահմանումների տարբերությունը: Մի դեպքում կարևոր ու առաջնային է համարվում այս հատկանիշը (հատկանիշները), մյուս դեպքում՝ այն, մեկ այլ դեպքում՝ ուրիշ (շատ դեպքերում էլ մասնագետներն ուղղակի խուսափում են սահմանում տալուց):

Նշենք, որ միշտ էլ տերմինին բնորոշ առանձնահատկությունների վերհանումն իրականացվում է «սովորական բառ» - «տերմին» հակադրության միջոցով, որտեղ սահմանազատման ելակետը լեզվական այդ երկու միավորների տարբեր գործառնությունն են:

Նախապես տերմինագիտության մեջ հաստատվում և որոշ լեզվաբանների կողմից (Ն. Պ. Կուզկինա, Յու. Ա. Բելչիկովա, Ա. Պ. Կովալ, Ե. Մ. Գալկինա-Ֆեդորով և այլք) ընդունելության է արժանանում տերմինի «վինոկուրյան» մեկնաբանությունը, որի համաձայն՝ «տերմինները հատուկ բառեր չեն, այլ միայն բառեր հատուկ գործառնությամբ: Հատուկ գործառնությո՞ւնը, որում բառը հանդես է գալիս որպես տերմին, անվանողական գործառնությո՞ւն է: ...Գիտատեխնիկական տերմինը անպայմանորեն հասկացության անվանում է»<sup>5</sup>:

<sup>3</sup> **А. И. Моисеев**, О языковой природе термина, лингвистические проблемы научно-технической терминологии, М., 1970, с. 138.

<sup>4</sup> Այս առումով հետաքրքիր է Ի. Ս. Կվիտկոյի տված սահմանումը, որը տերմինի առավել էական հատկանիշներ ընդգրկելու տեսակետից ամենաձավալունն է. «Տերմինը բառ կամ բառային համալիր է, որը հարաբերակից է իմացության որոշակի ոլորտի հասկացությանը, համակարգային հարաբերությունների մեջ է մտնում այլ բառերի և բառային համալիրների հետ և յուրաքանչյուր առանձին դեպքում և որոշակի ժամանակամիջոցում նրանց հետ կազմում է փակ համակարգ, որը բնութագրվում է բարձր տեղեկատվությամբ, մենիմաստությամբ, ճշգրտությամբ և արտահայտչական չեզոքությամբ» (**И. С. Квитко**, Термин в научной доктрине, Львов, Львовский Университет, 1976, с. 24):

<sup>5</sup> **Г. О. Винокур**, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, М., 1939, т. 5, с. 5-6.

Ավելի ուշ հիշյալ տեսությունը, որը տերմինը դիտարկում էր որպես *անվանողական գործառույթով* հանդես եկող բառ, իհարկե, շատերի կողմից քննադատվեց:

Առաջին քննադատներն էին Վ. Վ. Վինոգրադովը և Ա. Ա. Ռեֆորմատսկին:

Վ. Վ. Վինոգրադովը, անվանողական գործառույթը վերագրելով ընդհանուր բառապաշարին, հերքում է Գ. Օ. Վինոկուրի տեսակետը և տերմինների տարբերակիչ հատկանիշ համարում սահմանողական գործառույթը: «Բառը, - գրում է նա,- նախևառաջ իրագործում է անվանողական կամ սահմանողական (բնորոշիչ) գործառույթ, այսինքն՝ կա՛մ հատակ նշանակման միջոց է, և այդ դեպքում այն սովորական նշան է, կա՛մ տրամաբանական սահմանման միջոց է, այդ դեպքում այն գիտական տերմին է»<sup>6</sup>: Տերմինը սահմանում է հասկացությունը և դրանով նշում նրա և իր իսկ տեղը մյուս հասկացությունների և դրանց համապատասխանող տերմինների համակարգում:

Ա. Ա. Ռեֆորմատսկին իր հերթին իրավացիորեն գրում է, որ անվանողական գործառույթը բոլոր բառերի ընդհանուր գործառույթն է, այլ ոչ թե միայն տերմինների, ուստի տերմինը բնութագրելիս անվանողական գործառույթը չի կարող վերցվել որպես դրա էությունը բացահայտող հատկանիշ: «Տերմիններն իրենց հատուկ նշանակությամբ սահմանափակված հատուկ բառեր են, որոնք՝ որպես հասկացությունների և իրերի անվանումների ստույգ արտահայտություններ, ձգտում են մենիմաստության»<sup>7</sup>: Ա. Ա. Ռեֆորմատսկին առաջարկում է տերմինային և ոչ տերմինային բառերը տարբերակելիս առաջնային նշանակությունը տալ գործառնության ոլորտին, այսինքն՝ այն դաշտին («տերմինաբանական դաշտին»), որում տերմինը գործածվում է, և դրա սահմաններից դուրս այն մեծ մասամբ կորցնում է իր հատկանիշները՝ հասկացության հետ ունեցած կապը, խիստ և ճշգրիտ սահմանողականությունը, մենիմաստությունը, ոճական չեզոքությունը, համակարգայնությունը<sup>8</sup>:

Վ. Վ. Վինոգրադովի և Ա. Ա. Ռեֆորմատսկու հիշյալ դրույթները հաստատվում են լեզվաբանության մեջ և դառնում տերմինի տեսության հիմք:

Տերմինաբանությանը, նրա այլևայլ խնդիրների քննությանը վերաբերող նորանոր ուսումնասիրություններ հրապարակ գալուն համընթաց ավելանում է նաև *տերմին* հասկացության սահմանումների քանակը: Թեև մինչև օրս մասնագետները շարունակում են սահմանել տերմին հասկացությունը, այնուամենայնիվ բոլոր հետազոտողները միաձայն ընդունում են, որ տերմինի հիմնական տարբերակիչ հատկանիշը մասնագիտական որևէ ոլորտի պատկանող հասկացությունը գիտականորեն սահմանելն է:

Բերենք ժամանակակից տերմինաբանների և լեզվաբանների կողմից ձևակերպված մի քանի սահմանում:

<sup>6</sup> В. В. Виноградов, Русский язык, М., 1974, с. 12-13.

<sup>7</sup> А. А. Реформатский, Что такое термин и терминология, Сб. с., Вопросы терминологии, М., 1961, с. 47-48

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 48:

«Տերմինը հատուկ նշանակություն (իմաստ) ունեցող բառ կամ ստորադասական բառակապակցություն է, որն արտահայտում, ձևակերպում է մասնագիտական հասկացություն, կիրառվում է ճանաչողության և գիտական ու տեխնիկական օբյեկտների և նրանց միջև առկա հարաբերությունների յուրացման գործընթացում»<sup>9</sup>:

«Տերմինը հատուկ բառ (կամ բառակապակցություն) է, որը կիրառվում է մասնագիտական գործունեության մեջ և գործածվում է հատուկ պայմաններում: Տերմինը մասնագիտական իմացության որոշակի ոլորտի հասկացությունների համակարգի մեջ մտնող հասկացության բառային նշանն է»<sup>10</sup>:

«Տերմինը հատուկ լեզվի (գիտական, տեխնիկական և այլն) անվանողական հատուկ միավոր (բառ կամ բառակապակցություն) է, որը ստեղծվում (կիրառվում, փոխառվում) է հատուկ հասկացություն արտահայտելու համար»<sup>11</sup>:

Տերմինի նմանօրինակ սահմանում է տալիս նաև հայ լեզվաբան Ս. Գ. Աբրահամյանը. «Տերմինն այն բառն է կամ բառակապակցությունը, որը ճշգրտորեն արտահայտում է այս կամ այն հասկացությունը և նրա հարաբերությունը նույն բնագավառի այլ հասկացությունների հետ»<sup>12</sup>:

Մի խոսքով, սահմանումները շատ են և բավականին հետաքրքիր, սակայն բոլոր դեպքերում գիտնականները համակարծիք են այն հարցում, որ տերմինը իմացության որոշակի ոլորտի հասկացություն արտահայտող կամ սահմանող բառ (բառակապակցություն) է:

Ի տարբերություն համաշխարհային, մասնավորապես ռուս լեզվաբանությանը, հայ լեզվաբանության մեջ տերմինի բնութագրման և սահմանման հարցով քչերն են զբաղվել: Մեր երկրում տերմինագիտության զարգացումը միակողմանի ընթացք է ունեցել: Ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են գիտության այս կամ այն բնագավառի տերմինաբանության կարգավորման և մշակման ուղղությամբ, որի շնորհիվ լույս են տեսել մի շարք տերմինաբանական բառարաններ և տեղեկատուներ: Քննության դաշտից, դժբախտաբար, դուրս էր մնացել տերմինագիտության, մեր կարծիքով, առավել կարևոր՝ տեսական կողմը, որի գերխնդիրը հենց տերմինի սահմանումն է:

Այս բացը լրացնելու գործում մեծ ներդրում է կատարել մեծանուն լեզվաբան Էդ. Աղայանը: Նա առաջին անգամ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի ուսումնասիրության տիրույթ է մտցնում տերմինաբանությունը, իսկ տերմինագիտությունը համարում բառագիտության՝ բառապաշարի յուրօրինակ շերտ կազմող տերմիններն ու դրանց ամբողջությունն ուսումնասիրող ինքնուրույն բնագավառ: Սրանով Էդ. Աղայանը հիմք է դնում հայ լեզվաբանության մեջ տերմինագիտության տեսությանը: Մինչև օրս էլ տերմինագիտության տեսական հարցեր ընդգրկող ուսումնասիրությունների

<sup>9</sup> **Б. Н. Головин, Р. Ю. Кобрин**, Лингвистические основы учения о терминах, М., 1987, с. 5.

<sup>10</sup> **А. В. Суперанская и др.**, Общая терминология, Вопросы теории, М., 1989, с. 13.

<sup>11</sup> **С. В. Гринев**, Введение в терминоведение, М., 1993, с. 125.

<sup>12</sup> **Ս. Գ. Աբրահամյան**, Ժամանակակից հայերեն, Եր., 1981, էջ 115:

շարքում (որոնք շատ սակավ են) Էդ. Աղայանի ուսումնասիրություններն ամենարճագրկունն են և շարունակում են մնալ լավագույնը:

Իր մի շարք ուսումնասիրություններում<sup>13</sup> Էդ. Աղայանը հանգամանորեն քննում է տերմինի և բառի տարբերակման չափանիշները, լուսաբանում տերմինի հատկանիշները, ապա ձևակերպում *տերմին* հասկացության սահմանումը:

Պարզենք թե ի՞նչ դիրքորոշում ունի Է. Աղայանն այս հարցում, ի՞նչ սահմանում է տալիս *տերմին* հասկացությանը, և ո՞ր հատկանիշը կամ հատկանիշներն են ընկած այդ սահմանման հիմքում:

Ըստ Էդ. Աղայանի՝ տերմինը բնորոշելիս պետք է կարևորել ոչ թե դրա գործառական հատկանիշը, այլ իմաստաբանական առանձնահատկությունները: Տերմինի գործառական հատկանիշը «բավարար հիմունք է բառապաշարի գործառական դասակարգության համար, բայց ըստ էության քիչ բան է ասում տերմինի մասին և չի կարող հիմք հանդիսանալ տերմինի բնորոշման համար»<sup>14</sup>: Այս առումով «տերմինի համար կարևորագույնը բառի նշանակությունն է. եթե տվյալ բառի նշանակությունը գիտության, տեխնիկայի, արհեստների, տնտեսության և այլնի որևէ բնագավառի հասկացություն է, ապա նա տերմին է, եթե ոչ՝ տերմին չէ»<sup>15</sup>:

Եվ իսկապես, եթե առաջնորդվենք գործառական հատկանիշով (խոսքը տերմինի այս կամ այն ոլորտում գործածվելու մասին է), ապա մարդկային գործունեության ցանկացած առանձին ոլորտում գործածվող բոլոր բառերը պետք է համարենք տերմիններ: Սակայն գիտենք, որ այդ ոլորտներից յուրաքանչյուրում, մասնավորապես գրավոր խոսքում, բացի տերմիններից, գործածվում են նաև համագործածական բառեր և անվանակարգեր: Հետևաբար միայն գործառական չափանիշը բավարար չէ տերմինի և ոչ տերմինի սահմանազատման համար: Որպեսզի բառը գործածվի այս կամ այն ոլորտում որպես այդ ոլորտի տերմին, նախ պետք է լինի տվյալ ոլորտի հասկացությունների համակարգի մեջ մտնող և մյուս հասկացությունների հետ որոշակի հարաբերություններ ունեցող հասկացության արտահայտություն:

Տերմինաբանական տեսակետից Էդ. Աղայանը լեզվի ողջ բառապաշարը բաժանում է երեք մասի՝

ա) **ոչ տերմինային բառեր**, որոնք տերմինային նշանակություն և գործածություն չունեն, օրինակ՝ *գեղեցիկ, լավ, արագ, գնալ, ուրեկ, բերել* և այլն.

բ) **տերմինային բառեր**, որոնք սովորական կամ ընդհանուր գործածությամբ ու նշանակությամբ բառ են, բայց տերմինաբանորեն մասնավորված

<sup>13</sup> Տերմինագիտության տեսական հարցերի քննությանն են նվիրված Է. Աղայանի «Լեզվաբանության հիմունքներ» (Եր., 1987) աշխատության «Տերմինագիտություն և տերմինաբանություն» և «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության «Տերմինագիտություն» գլուխները: Վերջինս նախապես հրատարակվել է նաև առանձին գրքույկով: Է. Աղայանը տերմինաբանական բառապաշարի մշակման և նորմավորման խնդիրներին անդրադարձել է նաև մի քանի հոդվածներում:

<sup>14</sup> **Էդ. Բ. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 318:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 319:

գործածությամբ ու նշանակությամբ՝ տերմին, ինչպես՝ **գունարում, թերթ, բառ, պատուհան, պատ, ծառ** և այլն:

զ) **տերմիններ**, որոնք միայն տերմինաբանական նշանակություն ունեն, անկախ այն բանից, թե նրանք գործառական տեսակետից զանգվածային և առօրեական գործածություն ունեն, թե ոչ, ինչպես՝ **հնչույթ, արտադրամիջոցներ, երեսակ, հաղորդակ, լոգարիթմ, բնավայր** և այլն:

Պարզ է, որ վերջին տեսակի բառերի միջև տերմինաբանական տեսակետից ոչ մի տարբերություն չկա, և, ի տարբերություն առաջին կարգի բառերի, դրանք ունեն տերմինային իմաստ: Այսպիսով՝ ըստ էդ. Ադայանի տերմինային և ոչ տերմինային բառերն առաջին հերթին տարբերվում են իրենց իմաստներով: Այսինքն՝ բառային իմաստը այլ բնույթ ունի, տերմինային իմաստը՝ այլ:

Ի՞նչ առանձնահատկություններ ունի տերմինային իմաստն ըստ էդ. Ադայանի: Լեզվաբանը տերմինային իմաստը բնութագրում է երեք հիմնական հատկանիշներով՝

ա) *տերմինային իմաստի առաջին հիմնական բնութագիրը հենց որևէ բնագավառի հասկացություն նշանակելն է:*

Գիտենք, որ հասկացություն նշանակելը հատուկ է նաև «սովորական բառերին», ուստի տերմինի և ոչ տերմինի տարբերակման հարցում առաջնայինն արդեն տերմինային բառի և ոչ տերմինային բառի նշանակության հիմքում ընկած հասկացությունների տարբերությունն է: Եթե ոչ տերմինային բառերը նշանակում են «սովորական», մասնագիտական գործունեության հետ կապ չունեցող հասկացություններ, ապա տերմինները նշանակում են գիտական (տեխնիկական, արտադրական և այլն) հասկացություններ: Բ. Ն. Գոլովինը և Ռ. Յու. Կոբրինը գիտական և ոչ գիտական հասկացությունները տարբերակում են առարկաների, երևույթների և այլնի արտացոլվող հատկանիշների էականության աստիճանով. «Գիտական հասկացությունը ոչ գիտական հասկացությունից տարբերվում է արտացոլվող առարկաների էության մեջ թափանցելու բարձր աստիճանով»<sup>16</sup>: Հետևաբար տերմինային իմաստն իսկապես բնութագրվում է հիշյալ հատկանիշով:

բ) *Տերմինի իմաստը սահմանելի է. ամեն մի տերմինի իմաստ կարող է ներկայացվել որոշակի գիտական սահմանումով:*

զ) *Իբրև գիտական (տեխնիկական, քաղաքական և այլն) հասկացություն՝ տերմինի իմաստը ոչ միայն լոկ սահմանելի է, այլև ճշգրտորեն սահմանելի: Ճշգրտությունը տերմինային իմաստի անհրաժեշտ պահանջն է:*

Ասվածն ի մի բերելով՝ լեզվաբանը ձևակերպում է հետևյալ սահմանումը. «Տերմինը որևէ տերմինահամակարգի պատկանող և այդ համակարգին հատուկ՝ ճշգրտորեն սահմանելի հասկացություն արտահայտող բառ կամ բառակապակցություն է»<sup>17</sup>:

Այս սահմանման մեջ տերմինը բնութագրող և բառից տարբերակող

<sup>16</sup> **Б. Н. Головин, Р. Ю. Кобрин**, Лингвистические основы учения о терминах, М., 1987, с. 86.

<sup>17</sup> **Էդ. Բ. Ադայան**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 323:

հատկանիշը դրանով արտահայտվող հասկացության տեսակն է, որը պատկանում է մասնագիտական այս կամ այն ոլորտին, և, համապատասխանաբար, տերմինի՝ որևէ տերմինահամակարգի անդամ լինելը: Իսկ այն, որ տերմինը ճշգրտորեն սահմանելի հասկացություն արտահայտող բառ է, տերմինի և ոչ տերմինի տարբերակման հարցում էական դեր չունի: Ինչո՞ւ: «Տերմինը... ճշգրտորեն սահմանելի հասկացություն արտահայտող բառ կամ բառակապակցություն է» ասվածը նույնը չէ, ինչ որ՝ տերմինը հասկացությունը ճշգրտորեն (իհարկե, հարաբերական) սահմանող բառ կամ բառակապակցություն է: Այստեղ «ճշգրտորեն սահմանելի» հատկանիշը վերաբերում է հասկացությանը, իսկ հասկացությունը բոլոր դեպքերում ճշգրտորեն կամ գիտականորեն սահմանելի է՝ անկախ տերմինով կամ ոչ տերմինային բառով արտահայտված լինելուց: Ոչ տերմինային բառերով արտահայտվող հասկացություններն էլ կարող են լինել ճշգրտորեն սահմանելի: Այլ հարց է, թե համապատասխան բառային նշանը ճշգրտորեն սահմանում է այդ հասկացությունը, թե՞ ոչ: Այստեղ արդեն առաջնային պլան է մղվում տերմինի և բառի՝ հասկացության հետ ունեցած հարաբերությունը, որը կախված է նրանից, թե համապատասխան բառային միավորն ինչ գործառույթ ունի և ինչ նպատակների է ծառայում: Օր.՝ **ջուր** բառն արտահայտում է ճշգրիտ սահմանելի հասկացություն, ինչպես՝ ջուր՝ թթվածնի և ջրածնի միացություն (քիմիայում), հեղուկ, որը սառչում է գրո ջերմաստիճանում և եռում հարյուրում (ֆիզիկայում): Բայց այդ նույն հասկացությունն արտահայտվում է նաև համագործածական բառով, և առօրյա խոսքում գործածողը դրա մեջ այլ իմաստ է դնում, ասենք՝ հեղուկ, որը մարդն օգտագործում է այլևայլ կարիքներ բավարարելու համար՝ *ծարավը հագեցնելու, թեյ պատրաստելու, լոգանք ընդունելու* և այլն: Այս դեպքում արդեն այդ բառը գործածողին այնքան էլ չի հետաքրքրում դրանով արտահայտվող հասկացության էությունը, տվյալ դեպքում ֆիզիկական կամ քիմիական հատկանիշները: Արդյոք դրանից այդ բառի նշանակման հիմքում ընկած հասկացության որակը փոխվում է, և այն վերածվում է ոչ ճշգրտորեն սահմանելի հասկացության: Տերմինի դեպքում հասկացության գիտական և ստույգ սահմանումը պարտադիր պայման է, քանի որ այն հասկացության էության կրողն է, իսկ բառի դեպքում՝ ոչ: Այստեղ էականը տերմինի և հասկացություն բովանդակությունների հավասարաթեքությունն է, որն իրականացվում է սահմանման միջոցով: «Սահմանումը բառերով արտահայտում է այն յուրահատուկ հատկանիշները, որոնք տվյալ հասկացությունը տարբերում են իրեն կից հասկացություններից, և թվարկում է սահմանվող առարկայի, երևույթի հասկացությունը ներկայացնող էական հատկանիշները»<sup>18</sup>:

Այսպիսով, սահմանումը կապող օղակ է տերմինի և հասկացության միջև: Այդ կապը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ **հասկացություն → սահմանում → տերմին**: Սահմանումը բացահայտում է հասկացության էությունը, իսկ տերմինը այդ սահմանման խտացումն է, հետևաբար տերմինի իմաստը ոչ թե հենց հասկացությունն է, այլ այդ հասկացության սահմանումը: Տրամաբանորեն հանգում ենք նրան, որ տերմինը հասկացության

<sup>18</sup> **А. В. Суперанская и др.**, նշվ. աշխ., էջ 162:

սահմանումն է՝ արտահայտված մեկ բառով կամ բառակապակցությամբ: Տերմինը հավասարաթեք է իր սահմանմանը, որը համապատասխանում է հասկացությանը և հաղորդում է նրա հիմնական բովանդակությունը:

Գժվար չէ նկատել, որ Էդ. Ադայանը նույնացնում է տերմինային իմաստը և հասկացությունը, սակայն, մեր կարծիքով, դրանք բոլորովին էլ նույնը չեն: Տերմինային իմաստը լեզվական իրողություն է, իսկ հասկացությունը՝ արտալեզվական: «Գիտական հասկացությունը ունի մեծ ընդգրկունություն, որը լիարժեք բնութագրելու համար պետք է առանձնացվեն նախ հատկանիշների մի ամբողջ շարք, ապա այդ հատկանիշների կապերը և տվյալ հասկացության հարաբերությունները գոյություն ունեցող հասկացությունների համակարգի հետ»: Իսկ սահմանումը, «մնալով լիովին գիտական, պետք է ցույց տա այն էական հատկանիշները, որոնք առանձնացնում են տվյալ տերմինը իր տերմինաբանական համակարգում»<sup>19</sup>:

Այսպիսով, մեր կարծիքով, *տերմին* հասկացության բնութագրության հարցում, Էդ. Ադայանի նշած հատկանիշներից բացի, որոշակի կարևորություն ունի նաև սահմանողականության հատկանիշը, քանի որ տերմինը ոչ միայն արտահայտում է այս կամ այն ոլորտի տերմինահամակարգին պատկանող որևէ հասկացություն, այլև սահմանում է այն: Ուստի այդ հատկանիշը նույնպես պետք է ընդգրկվի սահմանման մեջ: Սահմանողականությունը կարևոր է հատկապես այն դեպքում, երբ տարբերակման են ենթարկվում այնպիսի բառային միավորներ, որոնք միաժամանակ և՛ տերմին են, և՛ համագործածական բառ (խոսքը բազմիմաստ և համանուն բառերի և տերմինների մասին չէ): Օրինակ՝ *սասող* և *մետր* բառերը՝ որպես համագործածական բառեր ունեն հետևյալ իմաստները (առաջնային, ոչ փոխաբերական): *Սասող*՝ «Սեփական լույս ունեցող երկնային մարմին, որ երևում է գիշերը՝ լուսավոր կետի նման»<sup>20</sup>, *մետր*՝ «հարյուր սանտիմետր»<sup>21</sup>: Մինչդեռ աստղագիտության մեջ նույն *սասողը* ունի այլ բնութագիր. «Աստղերը շիկացած ինքնալուսարձակող գազային հսկա գնդեր են, որոնց միջուկի միջին ջերմաստիճանը 15 միլիոնից մինչև 30 միլիոն է»<sup>22</sup>: Նույն *մետրը* մաթեմատիկայի տեսանկյունից այլ բացատրություն ունի. «Երկարության միավոր, հավասար այն հեռավորությանը, որը անցնում է հարթ էլեկտրամագնիսական ալիքը վակուումում վայրկյանի 1/299 792 458 մասի ընթացքում»<sup>23</sup>:

Աստղ և մետր բառերի իմաստները՝ որպես համագործածական բառերի իմաստներ, պարզ և մատչելի կերպով բացատրվում են, իսկ որպես տերմինային իմաստներ՝ գիտականորեն սահմանվում: Տերմինը իրենով արտահայտվող հասկացության վերաբերյալ գիտական ամփոփ տեղեկատվություն պարունակող ու հաղորդող լեզվական միավոր է:

<sup>19</sup> **Л. Л. Кутина**, Термин в филологических словарях // Проблематика определений терминов в словарях разных типов, Л., 1976, с. 22.

<sup>20</sup> **Էդ. Բ. Ադայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, գիրք 1, Եր., 1976, էջ 113:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 727:

<sup>22</sup> **П. Г. Куликовский**, Справочник любителя астрономии, М., 1971, с. 381.

<sup>23</sup> «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. 1956-2006», Եր., 2006, էջ 170:

**И. С. МОВСИСЯН** – *К вопросу дефиниции термина.*— В статье рассматриваются взгляды лингвистов на проблему дефиниции термина. Представлены существующие в лингвистической литературе подходы. Обычно специалисты пользуются рабочими определениями термина, которые, как правило, неполные, однако отражают его существенные свойства. В определениях термина чаще всего раскрываются два существенных признака (например, соотнесенность с научным понятием, системность и т.п.). Несмотря на то, что в армянском языковедении уделялось большое внимание проблемам унификации и упорядочения терминологии, теоретическая сторона оставалась малоисследованной до Э. Агаяна, чью точку зрения относительно сущности термина автор статьи тщательно рассматривает и анализирует данную им дефиницию.

По Э. Агаяну, различия между термином и словом обусловлены различием их смыслов, то есть термин выражает одно значение, слово — другое, что в свою очередь исходит из различий между научными и ненаучными понятиями. Основываясь на принятых в лингвистике теоретических положениях, в ходе анализа автор делает свой вывод: в определение термина, помимо других существенных признаков, следует включить дефинитивность, поскольку термин прежде всего определение научного понятия, выраженное итоговым словом или словосочетанием.